ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

ՀՀ ՏԿԵՆ կարիքների համար կազմակերպված «ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2025/25Փ» ծածկագրով գնման ընթացակարգի* գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ **18.08.2025թ.**
Ժամը՝ 15:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ճանապարհային ոլորտի քաղաքականության վարչության փորձագետ (հանձնաժողովի նախագահ՝ ԳՊ/ԳԱՊ)	Նորիկ Մնոյան

Հանձնաժողովի անդամներ՝

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հիմնանորոգման ծրագրերի կառավարման բաժնի ինժեներ (համաձայնությամբ՝ հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ)	Աստղիկ Խաչատրյան
«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հիմնանորոգման ծրագրերի կառավարման բաժնի ավագ ինժեներ (համաձայնությամբ՝ հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ)	Հրանտ Մինասյան
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության օրենսդրության բաժնի գլխավոր իրավախորհրդատու (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԲԱ)	Սիրանուշ Աբրահամյան
«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հիմնանորոգման ծրագրերի կառավարման բաժնի ավագ ինժեներ (համաձայնությամբ՝ հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԲԱ)	Էդգար Ֆրանգուլյան

Հանձնաժողովի քարտուղար՝

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գնումների համակարգման և կազմատնտեսական վարչության գնումների համակարգման բաժնի պետ (հանձնաժողովի քարտուղար՝ ԳՊ/ՄՀՄ)	Զանուշ Հայրապետյան

Հանձնաժողովի նիստին նախագահ Նորիկ Մնոյանը բացակայում էր, ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 26-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերը հանձնաժողովի կողմից նիստը համարվեց իրավազոր և սահմանված կարգով վարվեց հանձնաժողովի կազմում ըստ ընդգրկման առաջնահերթության նախագահի թեկնածուից հետո նշված՝ նիստին ներկա հաջորդող թեկնածուի՝ Հրանտ Մինասյանի կողմից:

«ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2025/25Փ » ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) հայտերի բացման և գնահատման նիստի օրակարգը

1. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ծառայությունների գնի վերաբերյալ:
2. Տեղեկություն՝ Ընթացակարգի հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին:
3. Տեղեկատվություն՝ Armeps (armeps.am) էլեկտրոնային համակարգում հայտերի ներկայացման վերաբեյալ:
4. Ընթացակարգը չկայացած հայտարարելու վերաբերյալ:

---

* Սույն գնումն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի, 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի հիման վրա:

1. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ծառայությունների գնի վերաբերյալ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայություններ գնման գինը.

Չափաբաժինների		*Չափաբաժնի անվանումը*
համարները	*գնման գինը*	
1	**280 000**	**Հ-58, /Մ-4/ -Ոսկեպար-Նոյեմբերյան- /Մ-6/ հանրապետական նշանակության ավտոճանապարհի Կիրանց գյուղով անցնող հատվածում լուսավորության համակարգի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություններ**

2. Տեղեկություն՝ Ընթացակարգի հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին

2.1 Ընթացակարգի հայտը Armeps (www.armeps.am) էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով բացվել է սահմանված ժամկետում՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետին՝ **2025 թվականի օգոստոսի 18-ին՝ ժամը 15:00-ին:**

3.Տեղեկատվություն՝ Armeps (armeps.am) էլեկտրոնային համակարգում հայտերի ներկայացման վերաբերյալ

3.1 Էլեկտրոնային armeps.am համակարգի միջոցով հայտերը ներկայացնելու վերջնաժամկետին Ընթացակարգին մասնակցության հայտեր չեն ներկայացվել:

4. Ընթացակարգը չկայացած հայտարարելու վերաբերյալ:

Գնահատող հանձնաժողովը որոշեց.

4.1 Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի (**ոչ մի հայտ չի ներկայացվել)** պահանջներով՝ Ընթացակարգը հայտարարել չկայացած:

4.2 Հաստատել Ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշման հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 2, դեմ-0

Հանձնաժողովի անդամների ստորագրություն՝

Հանձնաժողովի նախագահ՝	**Նորիկ Մնոյան**	.....
Հանձնաժողովի անդամներ՝	**Աստղիկ Խաչատրյան**	.....
	Հրանտ Մինասյան	.....
	Սիրանուշ Աբրահամյան	.....
	Էդգար Ֆրանգուլյան	.....
Քարտուղար՝	**Զանուշ Հայրապետյան**	.....